



«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ` << Կամք:Կամային հիմնական որակներ, դրանց
ձևավորումը և մաթեմատիկական կրթությունը >>**

ԱՌԱՐԿԱ` Մաթեմատիկա

ՀԵՂԻՆԱԿ` Ռուզաննա Գևորգյան

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ` Սևանի Վ. Կարապետյանի
անվան N3 հիմնական դպրոց**

Բովանդակություն

Ներածություն.	3
Թեմա 1.1: Կամք, կամային հիմնական որակներ և դրանց ձևավորման խնդիրը մաթեմատիկայի ժամերին.	5
Թեմա 1.2: Մաթեմատիկական կրթության դերը նպատակասլացություն կամային որակի ձևավորման գործում.	7
Թեմա 1.3: Մաթեմատիկական կրթության դերը ինքնուրույնություն կամային որակի ձևավորման գործում.	9
Թեմա 1.4: Մաթեմատիկական կրթության դերը ինքնատիրապետում կամային որակի ձևավորման գործում.	11
Եզրակացություն.	13
Օգտագործված գրականության ցանկ.	14

Ներածություն

Հաճախ մենք մեր հաջողության կամ երջանկության գաղտնիքը փնտրում ենք մեզանից դուրս: Գուցե այդպես հեշտ է, սակայն իրականում բոլոր գաղտնիքները գտնվում են մեր ներսում: Մենք այն ենք ինչ այս պահին ունենք, և խոսքն ամենևին էլ նյութականի մասին չէ: Մենք մեր մտածելակերպն ենք, մեր սովորույթները, զգացմունքները և վերաբերմունքը:

Այս ամենն են ձևավորում մեր անձը, մեր ապագան, մեր աշխարհը՝ այն աշխարհը, որտեղ ուզում է ապրել մեզանից յուրաքանչյուրը: Իրականում գաղտնիքը մեր փոքրիկ աշխարհի մեջ է, որը հասկանալով և ղեկավարելով միայն, մենք կարող ենք այն ընդարձակեցնել ու դարձնել ավելի մեծ աշխարհ:

Այդ պատճառով էլ կարևորվում է ժամանակակից կրթության առաջ դրված հիմնախնդիրների լուծումը: Հիմնախնդիրներ, որոնք անհրաժեշտ է դիտել ոչ միայն նեղ մասնագիտական, այլ ընդհանուր՝ բնագիտա-մաթեմատիկական և հումանիտար դիրքորոշումների տեսանկյունից, ինչն էլ պայմանավորում է անձի աշխարհայացքի, կամային հատկանիշների՝ նպատակասլացության, ինքնուրույնության, ինքնատիրապետման, վճռականության, համառության, տոկոսության, համարձակության, հաստատակամության, հետևողականության և այլ որակների ձևավորման, զարգացման գործում <<Մաթեմատիկա>> առարկայի դաստիարակչական ներուժով, հիմնական կրթության համակարգում մաթեմատիկական գիտելիքի ունեցած կարեւորագույն դերով:

Պետք է հստակ գիտակցել, որ մաթեմատիկան դպրոցում այն առաջնային առարկաների շարքում է, որոնք ունեն մեծ ներուժ զարգացնելու աշակերտի կամքը և կամային հիմնական որակները, նպաստելով՝ աշակերտի զարգացմանն ու առաջընթացին: Այս գործընթացի ճիշտ կազմակերպման կարևորագույն անձը ուսուցիչն է:

Մաթեմատիկան ճարտարապետություն է, ուսուցիչը՝ ճարտարապետ, իսկ աշակերտը կերտվող տաճար: Որքան հմուտ է ճարտարապետը, այնքան հոյակերտ է կերտված տաճարը: Մաթեմատիկայի ուսուցիչը աշակերտի գիտելիքի տաճարը կերտելիս պետք է խուսափի ձևականությունից և գորշ միօրինակությունից, այն

պետք է հազեցնի բարոյական, գեղագիտական, ազգային ու հայրենասիրական արժեքներով: Մեկ խնդրի շրջանակում աշակերտի հետ կարելի է խոսել թե՛ հայրենասիրությունից, թե՛ ազնվություն ու արդարությունից, թե՛ բնապահպանություն , թե՛ ընկերասիրություն: Աշակերտի մոտ ձեւավորելով սեր ու հարգանք հայրենիքի, ազգայինի, ընկերոջ, բնության նկատմամբ: Աշխատանքը նպատակ ունի ներկայացնել աշակերտի մոտ նպատակասլացություն, ինքնուրույնություն և ինքնատիրապետում կամային որակների ձևավորումն ու զարգացումը մաթեմատիկայի ուսուցման ժամերին:

Թեմա 1.1 : Կամք, կամային հիմնական որակներ և դրանց ձևավորման խնդիրը մաթեմատիկայի ժամերին:

Կամքը մարդու ակտիվության ձև է և դրսևորվում է հատուկ գործողությունների միջոցով, որոնք կոչվում են կամային: Ի տարբերություն ակամա կատարվող գործողությունների, որոնք կատարվում են չգիտակցված մղումների արդյունքում, չունեն որոշակի նպատակ ու կոնկրետ պլան, կամային գործողությունները և դրանց դրդապատճառները գիտակցված են և ուղղված են առաջադրված նպատակներին հասնելուն, դրանց համար անհրաժեշտ ջանքերի ներդրմանը, մարդու՝ իր վրա իշխանության և սեփական մղումների նկատմամբ վերահսկողության հաստատմանը: Յուրաքանչյուր կամային գործողություն կամ գործունեություն ենթադրում է նպատակի, դրա իրականացմանն ուղղված պլանի և գործադրվող ճիգերի առկայություն: Կամային գործունեության արդյունքում դրսևորվում, ձևավորվում ու զարգանում են մարդու կամային որակները, որոնք լինում են դրական և բացասական: Հիմնական կամային դրական որակներն են՝ համարձակությունը, հետեւողականությունը, նպատակասլացությունը, ինքնատիրապետումը, ինքնուրույնությունը և այլն: Այս որակներից յուրաքանչյուրն ունի նաեւ իր բացասական որակը:

Մարդու գործունեության հաջողությունն ու արդյունավետությունը մեծապես պայմանավորված է նրա կամային դրական որակներով: Այդ պատճառով սովորողների կամային դրական որակների ձևավորումը և զարգացումը հանրակրթության հիմնական և կարևորագույն խնդիրներից է: Հանրակրթական դպրոցի յուրաքանչյուր ուսումնական առարկա այս կամ այն կերպ նպաստում է սովորողների կամային որակների ձևավորմանը և զարգացմանը, սակայն տարբեր ուսումնական առարկաներն դրանք իրա կանացվում են տարբեր կերպ: Առարկաների մի խմբի համար՝ գրականություն, պատմություն, հասարակագիտություն, կամային դրական ու բացասական որակների ձևավորման հիմնական եղանակը որեւէ հերոսի օրինակի վերլուծումն է : Օրինակ գրականության դասին Րաֆֆու <<Սամվել>> վեպի գլխավոր հերոսի կերպարով

սովորողի մեջ կարելի է ձեռավորել հայրենասիրություն, նվիրվածություն, նպատակասլացություն, համառություն, հաստատակամություն: Այստեղ ուսուցչի խնդիրն է աշակերտի ուշադրությունը հրավիրել գրական հերոսի կամային դրական ու բացասական որակների վրա: Սակայն ուսումնական ոչ բոլոր առարկաներն ունեն բուն ուսումնական նյութի միջոցով կամային որակների ձեռավորման նման հնարավորություն: Այս դեպքում կարելի է այդ հնարավորությունը ստեղծել՝ դիմելով տվյալ գիտության պատմությանը: Օրինակ՝ աշխարհագրության, ֆիզիկայի, քիմիայի բնագավառներում յուրաքանչյուր հայտնագործություն կատարվում է կամային դրական որակների՝ նպատակասլացության, վճռականության, համարձակության, հաստատակամության դրսևորման արդյունքում: Օրինակ՝ այս կամ այլ կամային կարևոր որակի դրսևորում կարող է լինել Կոլումբոսի, Վասկո Դա Գամայի, Նյուտոնի, Պասկալի և այլոց չափազանց հետաքրքիր ու արժեքավոր կյանքի ու գործունեության ուսուցանումը աշխարհագրության, ֆիզիկայի դասերին:

Կամային որակներն անհրաժեշտ են նաև սպորտի ոլորտում հաջողությունների հասնելու համար, դրանք քիչ չեն սպորտի պատմության մեջ, ինչը կարող է ֆիզկուլտուրայի պարապմունքների ընթացքում կամային դրական որակների ձևավորման ու զարգացման համար լավագույն օրինակ ծառայել: Եթե կամային որակների դրսևորման գործընթացն պայմանականորեն տարանջատենք ֆիզիկական և հոգևոր ոլորտների, ապա ֆիզիկական ոլորտի ձևավորումը պայմանավորված կլինի հենց ֆիզկուլտուրայի դասերին խելամիտ կազմակերպումից: Հոգևոր ոլորտում կամային որակների ձևավորման գործում առանցքային դեր ունի մաթեմատիկայի դասավանդման նպատակային և ճիշտ կազմակերպումը:

<<Մաթեմատիկա>> առարկայի ուսումնական ծրագրային նյութի, նրա կառուցողական ու վերացական բնույթի, ապացուցողական հստակ ընկալման համար պահանջվում են կամային դրական որակների: Հետեւաբար, հստակորեն կարելի է պնդել, որ մաթեմատիկայի ուսումնական գործընթացի ճիշտ կազմակերպումը նպաստում է աշակերտի մոտ կամային լավագույն որակների ձեռավորման ու զարգացմանը: Մասնավորապես, առարկայի էությունը հասկանալու, խնդրի լուծման ճիշտ եղանակը գտնելու համար գործադրվող ջանքերի, նպատակաուղղված, բարդ ու դժվարին խոչընդոտի հաղթահարման, ինտելեկտուալ որոնման գեղագիտական հատկանիշների դրսևորումը դժվար է պատկերացնել առանց աշակերտի կամային որակների ակտիվ մասնակցության:

Թեմա 1.2 : Մաթեմատիկական կրթության դերը Նպատակասլացություն կամային որակի ձևավորման գործում

Կամային դրական որակների դրսևորումներից մեկը նպատակասլացություն է, որը որը իրենից ներկայացնում է անձի գործունեության գիտակցական և ակտիվ ուղղվածության դեպի որոշակի նպատակ կամ արդյունք:

Կամային այս որակի առկայությունը նպատակին հասնելու ճանապարհին առաջացած դժվարություններն ու խոչընդոտները չեն շեղում մարդուն այդ նպատակից և չեն կարողանում արգելակել, խանգարել նրան մինչև վերջ իրագործելու իր ցանկությունը: Իր աշխատանքում նպատակասլաց մարդը հասնում է հաջողությունների: Նպատակասլացությունը օգնում է մարդուն հաղթահարելու իր նպատակին հասնելու ճանապարհին հանդիպած արգելքները, նպատակին ուղղված յուրաքանչյուր հաջողված քայլ մարդուն բերկրանք է պարգևում, իսկ այդպիսի քայլերի իրականացումը հաջողության հասնելու գրավականն է: Նպատակասլաց մարդը հստակ գիտի իր անելիքը , տեսնում է իր նպատակը և առանց վարանելու գնում է դեպի այն: Կամային այսորակով օժտված մարդն ակտիվ է ու գործունյա, չի վախենում անհաջողություններից ու իր վրա պատասխանատվություն վերցնելուց, կարողանում է ճիշտ ինքնուրույն որոշումներ կատարել, ճիշտ է ընկալում իր նպատակի բովանդակությունը, նախագծում է իր գործողությունների պլանը: Նա կարողանում է ճիշտ պլանավորել իր ժամանակը, հեշտ հաղորդակցվել, իր գաղափարները կիսել իրեն համախոհ մարդկանց հետ: Այսպիսի մարդը պահանջված է լինում հասարակության մեջ , նա միշտ փնտրում ու գտնում է իր նպատակին հասնելու ուղիները , սակայն քիչ ժամանակ է տրամադրում իր առողջ ապրելակերպին:

Իսկ ինչպե՞ս ձևավորել այսպիսի անհատ: Նպատակասլաց մարդ լինելու համար նախ պետք է ունենալ նպատակ` այն ինչին ձգտում է մարդը: Դա կարող է արտահայտվել ցանկության կամ մտադրության ձևով, պետք է նաեւ առկա լինի դրան հասնելու համար գործողությունների ուղեցույցը կամ պլանը: Կախված

Նպատակի ծավալից այդ գործողությունները կարող են կազմված լինել առանձին քայլերից և ենթաքայլերից: Օրինակ՝ աշակերտը նպատակ է դնում կրկնել հիմնական դպրոցում <<Մաթեմատիկա>> առարկայից ձեռք բերած ծրագրային նյութը: Նա կազմում է համապատասխան պլան՝ իր նպատակը տրոհելով ենթանպատակների և յուրաքանչյուրի իրագործման համար նշում է ժամանակացույցը և անհրաժեշտ միջոցները: Օրինակ այդ ենթանպատակները կարող են լինել մաթեմատիկայի տարբեր բաժինների՝ թվային արտահայտություններ, հավասարումներ, անհավասարումներ, թվային հաջորդականություններ, տեքստային խնդիրներ, միացություններ, ֆունկցիաներ թեմաների վերաբերյալ տարբեր խնդրագրքերից առաջադրանքների կատարումը, իսկ նպատակն իրագործելու անհրաժեշտ միջոցները կլինեն գրենական պիտույքները, խնդրագրքերը, շտեմարաններ ու աշխատանքային պայմանները: Սակայն նպատակին հասնելու համար այս ամենը պետք է իրագործել, իսկ միայն պլանի կազմումը կդառնա լոկ երազանք:

Կարևոր է նաեւ ուսուցչի կողմից դասի պլանում նպատակի ճիշտ առաջադրումը և իրագործումը: Դասի նպատակի մեջ պետք է ներառված լինի ոչ միայն դասում եղած ուսումնական նյութի ակադեմիական մասը, այլ պետք է այն դիտվի որպես առարկայի ուսուցման նպատակի ենթանպատակ: Այստեղ պետք է նպատակ դնել նաև կամային որոշակի որակների՝ մասնավորապես, նպատակասլացության ձեւավորման և զարգացման հետ կապված խնդիրներ: Դրա ձեւավորման համար կարևոր է նաեւ ինքնակատարելագործումը՝ անվճռականության, թափթփվածության վերացումը, կարելու է նաեւ ինքնահարգանքը և սեփական ուժերի նկատմամբ հավատը: Կամային այս որակի ձեւավորման գործում մեծ է մաթեմատիկական կրթության դերը: Մաթեմատիկայի ծրագրային ողջ նյութը՝ թեորեմներ ու դրանց ապացույցները, խնդիրների ու վարժությունների լուծումը նպատակի իրագործումը է, չէ որ խնդրի կիսատ լուծումը կամ թեորեմի թերի ապացույցը ոչ մի նպատակի չի ծառայում: Մաթեմատիկայում առաջադրված նպատակը ենթադրում է նպատակի մինչեւ վերջ իրագործում (թեորեմի վերջնական ապացուցում, խնդրի կամ վարժության ճիշտ պատասխանի գտնելը և այլն):

Այս գործողությունները նպաստում են նպատակասլացության կամային որակի զարգացմանը:

Կամային այս որակի առկայության դեպքում միայն կարելի է տեսնել մաթեմատիկական գեղեցիկի սուբյեկտիվ հատկանիշները: Նպատակասլացության բացակայության դեպքում անհնար է տեսնել մաթեմատիկական գեղագիտությունը, անհնար է ջանք գործադրել մաթեմատիկայի եռությունը հասկանալու համար, իսկ մաթեմատիկայի բնագավառի առարկաները ընկալման համար ունեն բավականին

բարդ էություն և պահանջում են լուրջ ջանքեր: Եվ վերջապես, նպատակասլացությունը մաթեմատիկայում անհրաժեշտ է ինտելեկտուալ որոնումը, գտնելը, հայտնագործել ու ապացուցելը հաջող ավարտին հասցնելու համար:

Թեմա 1.3: Մաթեմատիկական կրթության դերը ինքնուրույնություն կամային որակի ձևավորման գործում

Մարդու խնդիրները, պլանները, նպատակները սեփական ուժերով լուծելու ունակությունը նրա ինքնուրույնությունն է: Երբ մարդն իր նպատակներն իրագործելիս կողմնորոշվում է ոչ թե դիմացինի, շրջապատի ազդեցությամբ, այլ առաջնորդվում է իր սեփական համոզմունքներով, պատկերացումներով, գիտելիքներով ու որոշումներով, նա դրսևորում է ինքնուրույնություն:

Ինքնուրույնության դրսևորումը խոսում է մարդու զարգացած կամքի մասին: Ինքնուրույն մարդը կարող է իր վրա վերցնել լուրջ պատասխանատվություն: Ինքնուրույն մարդը կարող է լսել այլոց դատողությունները տվյալ հարցի վերաբերյալ, ուսումնասիրել դրանք և իր համար կատարել խելամիտ եզրահանգումներ: Ինքնուրույնությունը պետք է տարանջատել նեգատիվիզմից, երբ ժխտվում է ցանկացած միտք, քանզի այն ուրիշինն է: Նեգատիվիզմի հակառակ երևույթը ներշնչվողությունն է, երբ մարդը ուրիշի ազդեցության ներքո կարող է կատարել ցանկացած որոշում: Երեխայի մոտ այս հատկանիշներն արտահայտվում են կամակորոշությամբ և ուրիշի ազդեցության տակ հեշտ և շուտ ընկնելով: Վերջիններս արտացոլում են երեխայի ինքնուրույնության բացակայությունը և հարկավոր է ամեն կերպ դրանք արմատախիլ անել երեխայի բնավորությունից: Հաճախ, իրենց լրացուցիչ հոգատարությամբ ծնողները երեխաներին զրկում են ինքնուրույնությունից: Ինքնուրույնության դրսևորման համար կարելի է նպատակի առկայությունը և այն ինքնուրույն իրագործելու քայլերի առկայությունը: Սպորտը մեծապես նպաստում է երեխայի ինքնուրույնության ձևավորման ու զարգացմանը, որը նպաստում է նաեւ նեգատիվիզմի ոչնչացմանը: Սակայն ուսուցչի և աշակերտի ոչ ճիշտ հարաբերությունները կարող են բերել ներշնչվողականության ձևավորմանը: Դրա համար ուսուցիչը չպետք է աշակերտին թելադրի իր կամքը, զրկի նրան ինքնուրույնագործելուց, այլ ուսուցիչը պետք լինի ուղորդողի դերում: Կամային այս որակի ձևավորման գործում մեծ է մաթեմատիկական կրթության դերը: Մաթեմատիկայի իմացությունը պահանջում է ինքնուրույն աշխատանք,

ինքնակենտրոնացում, ինքնուրույն մտածողություն, իսկ սրանք ինքնուրույնության ձևավորման քայլերն են: Սովորաբար, տարրական դպրոցում, ծնողները երեխաներին օգնելիս, նրանց փոխարեն լուծում են մաթեմատիկական խնդիրը կամ վարժությունը՝ խանգարելով ուսումնական նպատակների իրագործումը և զրկելով երեխային ինքնուրույնության կամային որակի դրսևորման, ձեւավորման ու զարգացման հնարավորությունից: Հաճախ, նաև, կամային այս որակի դրսևորմանը խանգարում են ուսուցիչները՝ անկախ իրենց կամքից: Սովորաբար, մաթեմատիկական բարդ խնդիրների լուծումը գտնելը պահանջում է նպատակասլացություն և երկարատեւ աշխատանք: Շատ ուսուցիչներ, ցուցաբերելով անհամբերություն, աշակերտին զրկում են ինքնուրույնության կամային կարևոր որակի ձևավորման և ամրապնդման հնարավորությունից: Կամային այս որակը աշակերտի մեջ ձևավորելու, ամրապնդելու և զարգացնելու համար հմուտ մանկավարժը կարող է երբեմն բանաձևի դուրս բերումը կամ թեորեմի ձևակերպումն ու ապացույցը թողնել աշակերտին ինքնուրույն կատարելու: Մաթեմատիկական կրթությունը սովորողի ինքնուրույնության կամային որակի ձեւավորման լավագույն միջոցներից մեկն է: Այն, զարգացնելով սովորողի մտածողությունն ու երեւակայությունը, նշելով գիտելիքի լայն կիրառելիությունը, հնարավորություն է տալիս նաեւ առաջադրվող հարցի մասին ունենալ սեփական կարծիքը, սեփական լուծման եղանակը գտնելու հնարավորությունները: Այստեղ հարկ է զգուշանալ ինքնուրույնության կամային որակի ձեւավորման խնդրում մաթեմատիկական կրթության նաեւ բացասական ազդեցությունից: Սովորաբար մտավոր ուժեղ կարողություն ունեցող աշակերտի մոտ կարող է ձևավորել նեգատիվիզմ, իսկ թույլ կարողությունների տեր աշակերտի մոտ՝ ներշնչվողություն: Ինքնուրույնության կամային որակի դերը մեծ է նաեւ գիտական գեղեցիկի սուբյեկտիվ հատկանիշների դրսևորման մեջ: Առարկայի եռությունը հասկանալու համար կատարվող բարդ ու դժվարին խոչընդոտների հաղթահարումը իրականացվում է միայն ինքնուրույն աշխատանքիարդյունքում, և այստեղ ուսուցչի կամ ընկերոջ կողմից տրվող օգնությունը կարող է սովորողին զրկել նյութի գեղագիտական հաճույքը զգալու հնարավորությունից: Գեղագիտական տեսակետից գիտական գեղեցիկը տեսնելուն խոչընդոտում է նաեւ <<հուշելու>> վնասակար երևույթը, այն հուշողին և հուշվողին բարոյական վնաս է հասցնում:

Թեմա 1.4: Մաթեմատիկական կրթության դերը ինքնատիրապետում կամային որակի ձեւավորման գործում

Ինքնատիրապետում կամային որակը դա իր վարքը, գործողությունները, իրեն տիրապետելու, իր խոսքը վերահսկելու ունակությունն է: Կամային այս որակն արտահայտվում է զգացմունքների կառավարման, գրգռիչ վնասակար ազդեցություններին արձագանքելու ներքին հանգստությունը պահպանելու, զայրույթը, ցասումը զսպելու կարողությունների մեջ է: Ինքնատիրապետումը պահանջում է կայունության դրսեւորում, արագ հաշվարկ, համբերություն, հանդուրժողականություն և չափի պահպանում: Ինքնատիրապետումը մարդուն հնարավորություն է տալիս գործելու ոչ թե զգացմունքով, այլ բանականությամբ: Ինքնատիրապետումը մարդու վարքագծին հաղորդում է վստահություն, նպաստում է արտակարգ իրավիճակներում ճիշտ որոշումներ կայացնելու, ինչպես նաև իրավիճակը հանգստության ու հավասարակշռության պրիզմայով տեսնելուն: Հայտնի մանկավարժ Մակարենկոն ինքնատիրապետումը համեմատել է մեքենայի արգելակման հետ: Նա գտնում է, որ ինչպես մեքենան չի կարող գործել առանց արգելակների, այնպես էլ մարդը չի կարող ապրել առանց ինքնատիրապետման:

Կան մի շարք հոգեբանական հնարքներ, որոնք թույլ են տալիս արտակարգ իրավիճակներում կարողանալ պահպանել ինքնատիրապետումը:

Միանգամից պետք չէ մտնել տհաճ իրավիճակների մեջ:

Հայտնի է, որ բացասական տեղեկությունն ավելի լավ է ազդում լսողության միջոցով: Այդ պատճառով լարված իրավիճակում չպետք է կենտրոնանալ լսողության վրա, այլ ուշադրությունը պետք է բևեռել տեսողական օբյեկտի վրա:

Եթե ինչ-որ մեկը փորձում է Ձեզ հունից հանել, ապա խոսքի չենթարկվելու համար աշխատեք մտովի տեսնել նրա դեմքը, որկարծեք հետագայում այն պետք է հիշողությամբ նկարեք: Նայեք լուռ և ուշադիր, լռության այդ վայրկյաններին ուսումնասիրեք նրա շրջապատը: Ձեր անսպասելի լռությունը

կթուլացնի դիմացինի լարված հոգեվիճակը : Արեք այնպես, որ Ձեր լռությունը հեզնանք և անբարյացակամություն չարտահայտի, այլ այն պետք է դրսևորի լռողի կամքի մեծ ուժը :

Վիզուալիզացիա: Երբ Ձեզ անհանգստացնող իրավիճակը պատկերում եք երեւակայության մեջ, դրանով սեղմում եք զայրույթը, հանգստանում և կենտրոնանում եք: Չետեւեք Ձեր շնչառությանը. այն պետք է հնարավորինս խորը լինի, խմբք սառը ջուր, դադար առեք, մի շտապեք պատասխանել: Դա հնարավորություն կտա գտնել արժանի պատասխան: Չետեւեք ձեր ֆիզիկական վիճակին: Եթե Ձեր կեցվածքն ուղիղ է , շնչառությունը կանոնավոր է և հայացքն ամուր, ապա ոչ-մեկի մտքով չի անցնի Ձեզ նեղացրել, իսկ եթե Դուք շփոթված եք, ապա նաև անպաշտպան եք: Ինքնատիրապետման, զսպվածություն կամային որակների ձեւավորման ու զարգացման համար մեծ նշանակություն ունի մաթեմատիկական կրթությունը: Երբ աշակերտն իրեն ստիպում է ոչ թե ընկերների հետ գնալ խաղալու, այլ նստել տանը, կատարել իրեն տրված հանձնարարությունները, լուծել մաթեմատիկական խնդիրը, դրանով նա զարգացնում է ինքնակառավարման, ինքնատիրապետման կամային որակը :

Ինքնատիրապետման կամային որակը կարելու դեր է խաղումնաև գիտական գեղեցիկի սուբյեկտիվ հատկանիշների դրսևորման գործում: Առանց ինքնատիրապետման կամային որակի անհնար է մաթեմատիկա առարկայի եռությունը հասկանալու ջանքեր գործադրել, հաղթահարել հանդիպած դժվարություններն ուխոչընդոտները: Կամային այս որակի բացակայության դեպքում գիտական գեղեցիկի հատկանիշների ընկալումն կարող է հանգեցնել նաև բացասական հետևանքների:

Եզրակացություն

Այսպիսով՝ անհատի կամային որակների սերմանում ու զարգացումը մանկավարժական գործունեության այն կարեւորագույն օղակն է, որը ձեւավորվում է մարդուն: Այս գործընթացը սերտորեն կապված է մաթեմատիկական կրթության ճիշտ կազմակերպման հետ: Ակտիվ է նաև հակադարձ կապը՝ մաթեմատիկական կրթությունը նպաստում է անհատի կամային որակների ճիշտ ձեւավորմանը: Պետք է միշտ հիշել, որ դպրոցում <<Մաթեմատիկա>> առարկան չպետք է աշակերտին սովորեցնի միայն բանաձևեր սերտել, բարդ տեսական նյութերով ծանրաբեռնել աշակերտին, այլ ընդհակառակը, մաթեմատիկական պետք է աշակերտին սովորեցնի հետաքրքիր դարձնել առօրյան, ունենալ նպատակներ, կարողանալ մշակել այդ նպատակին հասնելու պլաններ, տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու և խելացի հետեւություններ կատարելու հմտություններ ու կարողություններ:

Մաթեմատիկական կրթությունը պետք է զարգացնի աշակերտի տրամաբանությունն ու կարգի բերի միտքը: Այն պետք է նպաստի հասարակության լիարժեք անդամի կերտման գործին, ձևավորի իր կամային դրական որակներով օժտված անհատի:

Ծագումով չինացի, մաթեմատիկոս Ֆրենսիս Սուն գտնում էր, որ մաթեմատիկական կրթությունը մարդկության զարգացման շարժիչ ուժն է, ամեն մարդ պետք է հնարավորություն ունենա այդ շարժմանը մասնակցելու: Իսկ Գալիլեո Գալիլեյն (1564-1642) ասել է <<Բնության մեծ գիրքը գրված է մաթեմատիկայի լեզվով, առանց այն կարդալու մարդ խճճվում է մեծ լաբիրինթոսում>>:

Օգտագործված գրականության ցանկ

Биргкоф Г <<Математика и психология >>

Հ.Ս.Միքայելյան << Գեղեցիկը և մաթեմատիկայի ներուժը >>

<<Մաթեմատիկան դպրոցում>>

www.imdproc.am